

ԽՈՋԱԼԱՌԻ Դ ԳԵՐԵՋՄԱՆՆԵՐԸ.

Մ. Գետերբուրգի Կայսերական հնագիտական ընկերութեան անդամ պ. Է. Բէռլէքն այս տարի Ղարաբաղի գաւառի գանազան տեղերում մի շարք մարդաբանական և հնագիտական պեղումներ է արել, որ այդ երկու գիտութիւններին բաւականին հում նիւթեր են մատակարարում. Գ. Է. Բէռլէքը գերմանացի է և Զուլու բէալական գաղութի գերմաներէնի ուսուցիչ. նա Գետերբուրգի Կայսերական հնագիտական ընկերութեան, հռչակաւոր Վիրխով և ուրիշ գիտնականների յանձնարարութեամբ ահա չորս-հինգ տարի է, որ Ղարաբաղում պեղումներ է կատարում և այդ ժամանակուայ ընթացքում բաւականին հրեաթիւններ է գտել, որոնք ընդհանրապէս Կովկասի և մասնաւորապէս Ղարաբաղի նախնական և կուլաուրական պատմութեան ուսումնասիրութեան վրայ ահադին լոյս կարող են սփռել. Գ. Բէռլէքի պեղումների և զրա յաջող հետեանքների մասին թէ ուստական և թէ գերմանական մարդաբանական, նախապատմական և հնագիտական հանդէսները բաւականին մեծ գովասանքով են խօսել և պարզեւր աւելի խրախուսուած շարունակում է պեղումներ կատարել. նրա կատարած աւաջին պեղումների մասին մանրամասն տեղեկութիւններ կան Բերլինի Վիրխով, Բաւարիան և Փոս գիտնականների մասնաժողովի խմբագրութեամբ հրատարակուող «Zeitschrift für Ethnologie»-ում. Մենք այդ անցեալ պեղումների հետեանքների մասին տեղի սղութեան պատճառով զանց ենք աւանում խօսել, և անցնում ենք այն նորագոյն պեղումներին, որ կատարել է 1894/95 թուականներին Գ. Է. Բէռլէքն. այդ նորագոյն պեղումների մասին մեզ մի համառօտ և ամփոփ տեղեկութիւն տուեց, որ այժմ ուզում ենք մեր ընթերցողներին հագորդել. Վերջին անգամ նա պեղումներ է կատարել Ղարաբաղի Խոջալու պոստի կայարանի և Խալսնի Աւաջանք գիւղի մօտ Այս անգամ նա իւր նորագոյն պեղումների ժամանակ մեծ յաջողութիւն է անեցել:

Դ) Զուլու գաւառում շինելու մտաւորաւորութեան և շինարարական

Ամենից առաջ նա Խոջայու և Կարկաշայ գետերի մօտ բառակահին հնագոյն գերեզմաններ է բաց արել: Այդ գերեզմանները գտնուած են Խոջայու պտտի կայարանի մօտ և զբանց կարելի է իբրանց կազմութեան համեմատ շորս միմեանցից տարբեր տեսակների բաժանել, որ են.

ա) Բուրների վերայ գետերից վերջցրուած ողորկ քարերից (Rollsteine) շինուած միջակ մեծութեան աշտարական կուրգաններ, որոնց մէջ գտնուած են մի մի քարէ արկղ (սարկոֆագ).

բ) Մօտ 26 մետր բարձրութեամբ քարէ մեծ կուրգաններ, աբապուտա աւազով ծածկուած:

գ) Փարեխառն աւազէ կուրգաններ, որոնց ներսում գտնուած են փայտակոյտեր և վերջապէս

դ) Մեծ մասամբ անիւններ պարունակող կուրգաններ կամ գերեզմաններ:

Բայց այս վերջին տեսակի գերեզմաններում կմախքներ չեն գտնուել: Յիշենք այստեղ, որ Խոջայուի գերեզմաններում կամ կուրգաններում պ. է. Քէսուէրը զէնքեր բուրոգլին չէ գտել: Դրանից պարտեն եղբակացնում է, որ այդտեղի հին բնակիչները խաղաղ կեանք են վարել և այդպիսով իրանց կուլտուրային մեծ զարկ տուել: Իսկ ընդհակառակն քարգլիի հնախոյն Առաջամօր գիւղի գերեզմաններում շատ զեղեցիկ և կատարելագործուած զէնքեր է գտել, որ այդ գիւղում և զրա շրջականներում ապրած նախնական բնակիչների կուլտուրայի բարձր զարգացման անխուս զիաներ են: Խոջայուի կուրգաններում կամ գերեզմաններում գտնուած զրեթէ բոլոր իրերը բրոնզից են: Այդտեղ գտնուել են նոյնպէս սակուց, երկաթից և ուրիշ նիւթերից պատրաստուած մի քանի իրեր:

Դտնուած բրոնզէ իրերը հետեւեայններն են.

Մի թուշու, որի մէջքին մի կեռ բան է շինուած կախելու համար:

Մի փղբրիկ մուրն:

Մի տափակ մատանի, որի վրայ թաշնի մի գլուխ է շինուած:

Մի դանակ և ասեղներ:

Մի մեծ զնդակ:

Շատ փղբրիկ, ակնոցի մեծ փափրաստուած թիթեղներ, որ պ. Քէսուէրի կարծիքով հազուաւանների կամ ամանների զարդարանք են եղել, որովհետեւ ամբայցնելու տեղեր էլ ունին:

Շատ նետերի ծայրեր, որոնք զիստուրապէս կազմուած են Խոջայուի գերեզմաններում գտնուած զէնքերը:

Դատու թիթեղների երկու մնացորդ, նուրբ փղազգրութիւններով: Մի piazotte և պտուսակահան զարծիք:

Ռսկոյ պատրաստում իրերն են.

Ռսկեայ մատանիներ և ուրիշ զարդարուն սսկեայ կտորների մշակարարներ:

Մի զեհալ—մարգարիտ, որի վրայ եղած նշանները հաւանականորէն մի արձանագրութիւն է կազմում, Հետ պ. Րէտսլերի այդ արձանագրութիւնը մօզարերէն կամ նարաթերէն պիտի լինի: Բայց պ. հնարայգի կարծիքը միայն մի ենթադրութիւն է, որ եւրոպացի մասնագէտ գիտնականները կարող են և չընդունել:

Արտիգիանից և եղջիւրաքարից պատրաստում նեաի ծայրեր:

Մի երկաթեայ կարթի մանկ (Angelhaken):

Գարնէտից և ուրիշ քարերից պատրաստում շատ մարգարիտներ (ուլունքներ):

Միստ—կենդանու շատ սսկորներ. յետոյ մի կմախք, որի գլխին իրրն զարդարանք մի բրոնզեայ թիթեղ է դրուած:

Գ. Րէտսլերը կարծում է, որ այս կենդանիներին այգանդի բնակիչները պաշան ևն, ինչպէս եգիպտացիները պաշտում էին իրանց Ապիսին: Դոնէ հաւանաբան է այդպէս կարծել, այդ կենդանու գլխին դրած զարդարանքն ի նկատի առնելով:

Մանուսեղ շատ զեղեցիկ սափորներ են գտնուել, որոնք սե փայլուն կտից են պատրաստում: Այգալիսի զեղեցիկ սափորներ են գտնուել նոյնպէս Ջիւսէլիի գաւառում: Այս կտեայ անոթները մեծ մասամբ զեղեցիկ զարդարանքներով են ծածկուած, որ ցոյց են տալիս այգանդի բնակիչների զեղարուեստական զարգացած մաշակը:

Գ. Է. Րէտսլերը մինչև այժմ իւր արած հնագիտական պեղումների հիման վրայ եզրակացնում է, որ Գուր և Արաքս գետերի գերաւներում հին ժամանակ մի կուլտուրական մեծ տէրութիւն է եղել: Այդ հաւանական, բայց մինչոյն ժամանակ զեռ անորոշ պատմական եզրակացութեան համար իրրն ապացոյցներ կարող են ծառայել այն մինչոյն տեսակ հնութիւններն, որոնք Թաշենազէտի և Գուր ու Արաքս գետերի մէջ եղած տաքածութեան իջայ են գտնուել: Այգանդ գրտնում չինութիւնների մնացորդները, ամանները, անոթները, գրամները, զէնքերը, զարդարանքները և այլն մի խոսքով բոլոր դիւաներն իրրն նախադատմական անխռս, բայց մինչոյն ժամանակ զօրեղ վիտներ, ցոյց են տալիս, որ այդ կուլտուրան Ասորեստանի (') կամ Մաննիպցիների (') կուլտուրայի որոշ առանձնայատկութիւններն կամ զբրտմներն է կրում իւր վրայ: Հաւանական է ընդունել, որ Ասորեստանի (') կամ Մաննիպցիների (') կուլտուրան վերայիշեալ տեղի բնակիչների կուլտուրայի վրայ իր զօրեղ ազդեցութիւնը թողած լինի: Յայտ ունիմք, որ ապագայում նոր ուսումնասիրութիւնները մասնաւորապէս մեր երկրի և ընդհանրապէս Կովկասի պատմութիւնը կը լստարանեն:

Բո՛ղալլուսւմ գանձուած իրերը ցոյց են տալիս, որ այդանոց բը-
քանոցի կուսուսութայի սկզբնաւորութիւնն է եղել, որովհետեւ այդտեղ կա-
տարելագործուած զէնքեր չեն գտնուել։ Իսկ ընդհանառակն Առաջա-
նոր գլխի և սրա շրջակայ կուրգաններում գտնուցիկ և կատարելա-
գործուած բազմաթիւ զէնքեր են գտնուել, որոնք մեզ ստիպում են
ընդունելու, որ այդ ժամանակ այդտեղի կուսուսութան զարգացման
բարձր աստիճանի վրայ է կանգնած եղել։ Բո՛ղալլուսի կուրգանները
կամ գերեզմանները զանազան կուսուսութեան զարաշխաններին են
պատկանում, որովհետեւ ինչպէս վերեւում յիշեցինք, զբանց կարելի է
մի քանի գլխաւոր տեսակների բաժանել։ Դրանց մէջ գտնուած հնու-
թիւնները նոյնպէս կարելի է կուսուսութեան զարգացման զանազան
աստիճաններին վերագրել։ Վերջացում ենք սրանով մեր յօդուածը
և այդ նախադասական յիշատակարաններից ելքովացնում, որ հա-
ւանականորէն այդտեղ կուսուսութեան զարգացած մի կնիկներն է եղել
Ի վերջոյ մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում յարգելի պ. Է.
Քէօլպէրին և ցանկանում ենք կատարելայ յաջողութիւն, ներանոր օգ-
տակար պնդումներ կատարելու։